

Նայով Մարտի 10-ին կիրակի երեկոյեան ողջ առողջ ժամանեց իւր Աթոռը:

Նորին Սրբութեան կարգադրութեամբ Տ. Մասթէոս վարդապետ պահոց առաջին շաբթին մեկնեց Ախալցխայ իբրև քարոզիչ և հանդիսակատար Զատկական տօներին:

Նորին Սրբութեան բարեհաճ թոյլատրութեամբ Տփլիս ժամանեցին գեր. Տ. Բարդուղիմէոս եպս., Աինօղի անդամ Տ. Բագրատ վարդապետ և Տպարանի Տեսուչ Տ. Ազնիկ վարդապետ:

Տփլիսում Նորին Սրբութեան զեկուցում տալու եկան Շամախուց Տ. Եփրեմ վարդապետ՝ տեղւոյն Կոնսիստորիայի նախանգամ Տ. Աբսէն վարդապետ Բագուի գործակալ, Տ. Տաճատ ա. քահանայ Մարաղեան՝ Շամախոյ Կոնսիստորիայի անդամ և Տ. Ընձակ վարդապետ Ախալքալաքի գործակալ:

**ԿՈՐԻՆ Վարդապետ**



**ՀԱՅՈՑ ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՅԻ 400,000 Ր. ՊԱՀԱՆՁԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԼՈՒՍԱԻՈՐՈՒԹԵԱՆ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԻԻՆԻՅ**

(Կառավարչական Սենատի քաղաքացիական վճռաբեկ Դատարանէնտի նիստը 1902 թւի մարտի 20-ին)

Երդուեալ հաւատարմատար Սօկրատ Մէլիք-Աղամբան, որպէս Վրաստանի և Իմէրէթի հայ-լուսաւորչական թեմի կոնսիստորիայի հաւատարմատար, գանգատ ներկայացրեց

Թիֆլիսի նահանգական դատարանին ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան դէմ, յանձին կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձուի, պահանջելով, որ ճանաչվի Ախալցխա քաղաքի ս. Փրկիչ եկեղեցու սեփականութեան իրաւունքը անշարժ կալուածի վրա, որ բազկացած է ութը գիւղերից Ախալքալաքի դաւառում: Ինչպէս յայտնի է, այդ կալուածները կովկասեան ուսումնարանական իշխանութիւնը իր իրաւասութեան ենթարկեց 1898 թւի մարտի 26-ին Մինիստրների կոմիտէտի Բարձրագոյն հաստատված կանոնադրութեան հիման վրա, որպէս հայոց եկեղեցական գաղթիցներին պատկանող կալուածքներ:

Այդ պահանջի դէմ, որ գնահատված էր 400,000 ռուբլի, կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձուն ներկայացրեց պատասխան, որի մէջ ասում էր, թէ այդ գործը ենթակայ չէ դատաստանական հիմնարկութիւնների քննութեանը, ապացուցանելով, թէ որովհետեւ հայոց եկեղեցու վարչութիւնը չէ առանձնացած որպէս առանձին հոգևոր հաստատութիւն և մտնում է ներքին գործերի մինիստրութեան կազմի մէջ, այդ պատճառով կալուածքներին վերաբերեալ ներկայ վէճը, որ ծագել է ներքին գործերի մինիստրութեան և ժողովրդեան լուսաւորութեան մինիստրութեան միջև, Քաղաքացիական դատավարութեան կանոնադրութեան 1297-րդ յօդուածի հիման վրա, պէտք է լուծուին ստանայ վարչական (ադմինիստրատիվ) կարգով:

Սակայն այդպիսի կարծիքի հետ չը համաձայնվեցին ոչ նահանգական դատարանը, ոչ էլ դատաստանական պալատը, որոնցից նահանգական դատարանը բաւարարութիւն տուեց ըստ էութեան, իսկ դատաստանական պալատը դադարեցրեց գործի քննութիւնը ըստ էութեան, ի նկատի ունենալով, որ կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձուն վճարեկ գանգատ է ներկայացրել Սենատին պալատի որոշման դէմ, որով Հոգաբարձուի մասնաւոր գանգատը այն բանի մասին՝ թէ ներկայ գործը ենթակայ չէ դատաստանական հիմնարկութիւնների քննութեանը, անհետեւանք թողնվեց:

Հոգաբարձուի վճռաբեկ գանգառի դէմ երգուեալ հաւատարմատար Ս. Մէլիք-Աղամեան ուղարկեց Սենատ մի գրաւոր բացատրութիւն, որի մէջ նա ապացուցանում էր, որ ներկայ գործի քննութեան ժամանակ նշանակուած թիւն ունի ոչ թէ այն՝ թէ հայ լուսաւորչական եկեղեցին արդեօք առանձին վարչութիւն է կազմում պետական կառավարչութեան կարգի մէջ, այլ այն, որ հայ-լուսաւորչական եկեղեցին արդեօք իրաւունք ունի սեփական եկեղեցական կալուածքներ ունենալ, թէ այդպիսիները պէտք է պատկանեն գանձարանին:

Այդ հարցը լուծվում է Օտար Դաւանութիւնների Կանօնադրութեան 1213 և 1214 յօդուածների հիման վրա, որոնց զօրութեամբ հայոց եկեղեցիներին, վանքերին և նրանց պատկանող աստուածահաճոյ հիմնարկութիւններին պահպանութեան համար նշանակուած բոլոր կալուածքները մնում են հայ-լուսաւորչական եկեղեցուն և ոչ թէ գանձարանի սեփականութիւն, որից պէտք է հետևեցնել, որ հայոց եկեղեցու սեփականութեան իրաւունքին վերաբերեալ ներկայ վէճը չէ կարող այլապէս վճռվել, եթէ ոչ դատաստանական կարգով, որ մատնացոյց է արված Քաղաքացիական դատավարութեան կանօնադրութեան 1298-դ յօդուածում:— Այդ եզրակացութեան ճշմարտութիւնը հաստատվում է և 1898 թ. մարտի 26-ին Մինխատրների Կօմիտէտի Բարձրագոյն հաստատված կանօնադրութեամբ, որով պատուիրվում է Կովկասի ուսումնարանական իշխանութեանը իր իրաւասութեան տակ առնել այն գոյքերը, որոնք պատկանում են հայոց եկեղեցական անձանց, որովհետև վերոյիշեալ Կանօնադրութեամբ հայ-լուսաւորչական հոգևորականութեան ներկայացուցիչներին իրաւունք է տրվում վէճեր սկսել իրանց վերոյիշեալ գոյքերի մասին սովորական դատաստանական կարգով:

Մարտի 20-ին չորեքշաբթի օր, այդ գործը քննվում էր Կառավարչական Սենատի քաղաքացիական վճռաբեկ գեղարտամէնտում, ուր կօնսիստօրիայի շահերը պաշտպանում էր եւ երգուեալ հաւատարմատար Ս. Մէլիք-Աղամ-

եանի բացատրութիւնները ապացուցանում էր յայտնի երգուեալ հաւատարմատար Պ. Գ. Միրօնօվ:

Սենատը, լսելով ներկայ դործը և օրէք-սլոսիւորի եզրակացութիւնը, որոշեց. — Թիֆլիսի դատաստանական պալատի վճիռը վերոյիշեալ հարցի վերաբերմամբ հաստատել, անհետեանք թողնելով կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձուի վճռաբեկ գանգատը:

Այդպիսով, սրանից յետոյ հայոց կօնսիստօրիաների կողմից սկսած բոլոր վէճերը կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձութեան դէմ վերջնական լուծումն կը ստանան սովորական դատաստանական կարգով, որոնց մէջ դործերի մեծամասնութիւնը արդէն լուծված է ի նպաստ հայոց եկեղեցու, բայց միայն դատարանի առաջին ինստանցիայում և ներկայումս այդ դործերը դանվում են դատաստանական պալատում կովկասեան ուսումնարանական շրջանի բողոքարկու գանգատներով:

(Արսասյուրբիւն «Մեակից»):



## ՂՈՒԿԱՍԵԱՆ ՄՐՅԱՆԱԿԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ՄԿՐՏԻՉ Ծառայ Գրխտոսի և Անհասանելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ և Կաթողիկոս Ամենայն Հայոց, Ծայրագոյն Պատրիարք Համաղգական Նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի. Պատուարժան Անդամոց մ'նայուն Յանձնաժողովոյ կրօնապատմական Թանգարանի Վանաց աւագ Եկեղեցւոյ Հայոց Տփլիսայ, կառուցելոյ ի մեծարգոյ պ. Աւետիքայ Բ. Ղուկասեան, հարադատիցդ Մայր Աթոռոյսնուիրեմք ողջոյն և օրհնութիւն Հայրապետական:

Ի յայտարար գրութենէ Յանձնաժողովոյդ՝ մատուցելոյ Մեզ յ30-ն նոյեմբերի անցելոյ ամի, հաւաստի եղաք, զի բարեպաշտօն պ. Աւետիք Բ. Ղուկասեան ի 20-ն յուլիսի նոյն ամի գրու-